

ՎԵՀԱՓԱՌՈՒ ՏԷՐ՝

Չայն ոգեշարժ հայտնորոյն յունկս հնչի քողցրուանչ,
 Կենդանութեան տայ դաւետիս նոր յերգ պարզել զիւրեանց շունչ,
 Տօն մեծ այնոր արժանընտիր Հայրապետին Գեորգայ,
 Օն փութացէք ի դրուստել որդիք քաջին Թորգոմայ,
 Բարէ նոյն ձայն եղեմայլուր աշխոյժ սփռէ գլխովին,
 Շարժէ զմեզ ջահալուցել զմեծափառ սօն Վեհիդ,
 Եւ փոյթ հանիել Չեզ յանդիման այս նորահիւս ընծայիւ *),
 Երախտագէտ սարսեօք ցեալ տալ Չեզ ուղերձ գոհ սրտիւ,
 Ընկալ Հայր մեր, Հայր Վեհափառ, ընկալ սանուցդ դայս նուէր,
 Ընկալ ի՛ հաճոյս կամաց Չերոց, դայս աղաչմբ անձնանուէր,
 Ընկալ, բայց ոչ Չեր երախտեաց եւ ոչ չգանց փոխարէն,
 Ոչ, զի նորատունկ մատող ծառոց երախայրիք է արգէն,
 Սա ոչ կարէ լինել արիտուր չքնաղ դործոցդ Հայրական,
 Եւ ոչ խնամոցդ՝ դոր Դուք ունիք ի մանկունս Արամեան,
 Այլ երախտեաց եւ Չեր չգանց մեծ փոխարէն, Հայր բարի,
 Դուք ստանալ ունիք անշուշտ մեր յԱրարչէն կրկնակի,
 Մեր յԱրարչէն, որ զՉեզ ընտրեալ ի մարմանդին հայրենեաց,
 Եդ լուսատու հզոր ձեռամբ դերդ արեգակ մեծապանծ,
 Ոյր վասն եւ Դուք սիրեալ զազգ մեր՝ փոյթ մեծ տանէք քրտնաջան,
 Լոյս տարածէք, յոյս փրկութեան վերականգնէք ի զորդ հայութեան,
 Ահա քոյրիկք իմ համատեղ, ահա մեզ որ հրաշակի,
 Օն զմաղթանս առ Տէր ուղղել, ճե փութացէք սրտիւ լի,
 Երկարեսցի ոսկեմարօտ Հայրապետին թել կենաց,
 Չհայրական զէր հեղուլ ի յանդաստանս Հայկազանց,

Առջ արեւմտեան Օրէնքի մէջ Գործողն Վարչապետոյն
 ԵՂԻՍԱՅԷԹ ԱՍՏԱՊԱՏՅԵԱՆՏ:

Հետագայ ուղերձները ձեմարանական հանդիսին մէջ կարդացուածներն են,
 եւ առաջինը՝ ձեմարանի Գեր. Վերատեսչին ճառէն յետոյ՝ Հայկաբանութեան եւ
 Հայ. դպրութեան դասատուն ընթերցաւ:

ՈՒՂԵՐՉ

Մուսայգ. Հայոց՝ աւետարտ. յաղթանակաց ի գուպար,
 Ի սրբաւայրս օրհնորութեանց ի դարձրայս թեւապար,
 Հիմ իջ պարզիս յերգ յայս հանգէս յունկըն պարաւ Հայկեան տան,
 Միթէ չիցեն, բարձան խոպառ աւուրք փառաց Թորգոմեանս
 Ոչ, այս զհնուց յաղթանակաց չէ այս հանգէտ դիւցազին

(*) Այս առիւլ ծրիորդ մի բարձ նուիրեցին ՎՃԿ. Հայրապետին, զոր ինքեանք ծեազոր-
 ծած էին:
 Մ. Եմբ.

Որ ի նախնիքս ճապարկաց քաղէ ի վարձ ըզդափնին,
 Այլ հայրենեաց Հօրքն Վեհի եւ Աստուծոյ Օծելոյն
 Ի լուր ըզփառքս վաստակոց երգել զՆորին մեծ անուն,
 Այսպէս երբեմն անաղօս լոյս ծագէր նորոգ միշտ արփին
 Կենաց սըրբոյ Հօր Պարթեւի՝ սլըճնել զաւուրքս նորին,
 Այսպէս երբեմն Երանի հընչէր փանդիւն տանս Հայոց,
 Խընդայր աշխարհ, բերկրէր յուսով, հըրճուէր Պարթեւն ի գահոյս:

Գոչեա Մուսկոյ մեծաբարբառ, ողջուստու արդ կըրկին
 Ըզվերագարձ արփւոյն սլայծառ Հօրս աւետել աշխարհին,
 Հարէք բամբուռնք եւ զարթիցէ ի լուր ձայնից Հայկեան տուն,
 Եւ գիմեսցեն բերկրապատար յատքս Վեհի Հօր յողջոյն:
 Ըսուալեցէք առ դարշապարս Նորին ըզխանդքս սըրտից,
 Հեղէք սիրոյ դուք ըզնըւագս եւ զօրհնութեանց երգս տմբծ:
 Բանուն քո՛ Հայր, քանի՛ շըրթունք ի յօրհնութիւնքս սարդին,
 Բանուն քո մեծ բիւրք բիւրուց սիրտք ի դուք սիրոյ մորմարին,
 Բանունդ յաւէրք սլըսակազարդ եւ մեք ահա քո սրդիք
 Կենդանութեան եւ իմաստից ըզսիւք դիեն հայրենիք:

Գու ի սոյն վայր ուր ըզհիմունս արկին Մեսրովլ եւ Սահակ,
 Բաւերակաց հաներ դատճարս եւ կառուցեր փառունակ,
 Աջ Պարթեւին շնորհապարգեւ աստ ըզհիմունսն դընէր,
 Աջ քո օրհնեալ, Վեհ Հայրապետ, ըզդըրանդիւնն պընդէր
 Բեդ Օծելոյդ բիւր երանի, որ գնոյն փառացըն Սըրբոց
 Աւեր տրիտուր քոց վաստակոց մերթ երաշխէպըս ցաւոց,
 Այս փոխարէն միշտ արդարոց եւ այս ի մէնջ է բաժին,
 Պըսակ փըշեպ՝ ոչ վարդենւոյ՝ ի գլուխ ճըրկին մեր երդին:

Այլ Բոյս եւ Սէր, Հաւատ խարիտիս յոր դու յեռուս անտասն,
 Սաւառնաթեւ հանդէպ քոյին հըրեշտակ կարգեալ սրահապան,
 Եւ քաջսլաղթ Պաշտպան քո Սուրբ աստարափակ ըզՔեւ յար
 Զերծ սրահեցեն ի վըտանդաց եւ յաւելցեն ամս յամայր:

ՄԿՐՅԻԶ ՊԱԼԵԱՆ

ՈՒՂԵՐԶ.

Չըւարթարար այսօր արփին ծագէ մեղ լոյս դեղանի,
 Օր հըրճունաց եւ խնդութեան ի տարեդարձ Հօրս վեհի,
 Որ անձանձիր յերկ վաստակոց սըփուէ ի մեղ զիւր խընամ
 Մարդեալ յուսումնն գիտութեանց զՀայոց մանկանցըս երամ:

Չոր ժողովեաց քաղցր ի հրաւէր ի հոյակապս իւր տաճար
 Նոր նորգեւ Հայկեան դարմիս զոսկեզինիկ զայն մեծ դար՝
 Երուս՝ Սահակ ընդ Մեսրոպայ ի սէր ազդին աջակցեալ
 Չտըգիտութեան փարատեցին զվաղեմին մէգ մըռայլ:

Չնոցին ի քեդ, ո՛վ Հայրապետ, դիտեմք չընող ըզտիսար,
 Որ ի նախնձ բարեաց զազգ քո ցանդ յորդորես հայրաբար,
 Ոչ, ոչ ի զուր են քո վաստակք՝ Հայր Հայկազանց բազմաշիատ,
 Պըսակեցցեն սրդիւնք դործոց Գիտապետիդ ըզճակատ: